

տում, ճնշում, խեղտում է ամբողջ ժողովրդային ընդհանրությունը:

Ինչպէ՞ս է Բաֆֆին բաց անում այն գորղեան հանգույցը:

« Կարծես բացատրում էր ինձ բոլորը, յայտնում է Ֆարհատը, Կարծես ինձ ասում էր՝ թէ գիտացու վիճակը կարող է աւելի բարւոյք լինել, եթէ հասարակութիւնը որիչ ձեռով կազմակերպված կը լինի: Նա ասում էր, թէ այն ժամանակ շարութիւն չի լինի, բոլոր մարդիկը բարի կը լինեն, տմենի ապրուստը ապահովված կը լինի. — աղաների դարը կանցնէ, կը տիրէ միայն արդարութիւնը և իրաւունքը: Նա երկար ու երկար մեկնում էր, թէ ինչ ձեռով պէտք է հասարակութիւնը կազմակերպել, որ զօրեղ ընն անգործին չը ճնշէ, որ մշակ մարդու աշխատութեան վատասելը չը խնդ, և նա միշտ իր տանը, ուտելու հաց ունենայ, և ամենի վրայ տիրէ հաւասարութիւնը... »

« Եթէ մենք ցանկանում ենք, եզրակացնում է իր բուլբո խօսածները Ստանն իր կողմից, եթէ մենք ցանկանում ենք, որ շարագործութիւնները բաժանուք, պէ՛տք է աշխատենք նստիս ուղղել հասարակութեան թեւան վատ կազմակերպութիւնը, և այն ժամանակ նրա անդամները բոլորը բաւ կը լինեն: »

Պատեթեան այդ ճշմարտութիւնը, այդ խօսքը ներկայ դարու մարդկութեան բոլոր առաջնորդները բարձր ճշգրտումների ծագեցնողն է եղել: Նա ղեկավարել է, ղեկավարում է և դեռ կը ղեկավարէ մարդկութեան բոլոր ճշմարիտ առաջնորդները զօրծիշներին, յանուն այդ ճշմարտութեան հոսել է, հոսում է և դեռ կ'հոսեն մարդկութեան բարօրութեան համար մարտնչողների արիւնը: Նա հիմքն ու շարժառիթն է այն մեծ սօցիալական յեղափոխութեան, որ ոչ այնքան ուշ ամբողջ Ներսիսի ներկայ փթած ու հնացած հասարակական կազմակերպութիւնը հիմքից կը կործանէ, նրա տեղ առաջացնելու և կանգնելու հասարակական նոր իդէալներ, նոր սրայմաններ, հանրակացութեան նոր կերպեր, որոնք ընդունակ կ'լինեն ապահովեցնել ու նպաստել հանրային լիակողմանի զարգացումն ու բարօրութիւնը:

Այդ ճշմարտութեան խոր իմաստը Բաֆֆին չէր կարող չհասկանալ և հայութեան վերաբերութեամբ նրան դարձնելով իր աշխատութիւնների հիմնական միտքը և չրջահայեցողութեան կէտը, նա հետեւեց գիտնական ճշմարտութեան, որ յենված է հանրամարդկային կենցաղի պատմական փորձերի վրայ:

Հէնց նոյն այդ ճշմարտութեամբ առաջնորդվելով, Բաֆֆին նկարագրեց « Խենթի » մէջ Վարդանի երազը: Թող նենք մի կողմ այդ նկարագրութեան, որպէս իդէալական հասարակական կազմակերպութեան, անկատարութիւններն ու պակասութիւնները և տեսնենք թէ ինչ է այդ երազի իմաստը: Վա ապագայ հասարակական կազմակերպութիւնն է. դա ապագայ բան ող և բան ուր աշխարհն է, որի հիմքը աշխատութիւնն է. դա մարդկային ապագայ, նոր, վերածնված կեանքն է, հիմնված ընդհանուր համերաշխութեան և անհատական ազատութեան

սկզբունքի վրայ. դա մարդկային մի մեծ ընկերութիւն է, զիմով զէպի լիակողմանի զարգացում և վայելող լիակողմանի ազատութեամբ, հաւասարութեամբ ու եղբայրսիրութեամբ: Վա, վերջապէս, վարդանի երազած հայ աշխարհն է, որ միակ զարմանն ու հանդիստն է հայութեան:

Սակայն ինչպիսի միջոցներով հասնել այդ բախտաւոր կացութեան, այդ հեռու որ նպատակին:

« Կարծես ասում է՝ ազատութիւնը մարդու ընդաբայս ընտանցումներից մէկն է, — խօսում է Ստանը Ֆարհատի հետ. — ազատութիւնը ստեղծված և ծնված է մարդու հետ Կարծես ասում է՝ բնութեան մէջ ամեն մի առարկայ, որոնց մէջ կայ կեանքի և անկեղծութեան զօրութիւն, պահանջում են ազատ լինել, ազատ զարգանալ: Եւ եթէ մարդ տանում է ստրկութեան, դա ակամայ է. հեռացրու նրանից ճնշող ուժը, կը տեսնես, նա ազատ է ալ է: Շատ հարկաւոր չէ, ասում է Կարծես, որ մարդը հասկանայ, թէ ինչ նիւթ է օղը, կամ սրպիսի քիմիական տարրերից բաղադրված է նա և կամ ինչ սնունդ է տալիս իր մարմնին, — բաւական է, որ նա զիտէ, երբ օդ չը ճնշէ, կը մտնի: Ազատութիւնը, ասում է նա, մարդու հասարակական կեանքի մթնոլորտն է, որի մէջ զարգանում է նա, կատարելագործվում է և հասնում է իր մարդկային բարձր նշանակութեանը: Արքան ճնշված, որքան աւանդաւորակված լինի այս մթնոլորտը, այնքան մարդը անգործ, ծղլ և բթամիտ կը մնայ: — Ազատութիւնը մարդ սովորում է ազատութեան մէջ: »

Յինվելով այն ճշմարտութեան վրայ, որ « բարբարոս ազգերի լեյաւնութեան ներքոյ, սրտք ամեննին կրթութեան ընդունակ չեն, առհնար է մի ուրիշ աւելի ընդունակ ազգութեան գաբգաւնալ և մարդկութեան առաջագիմում: Եւ թեւեւ ձգտուէ », — Ստանը շարունակում է. — « Ահա դիտարար պատճառը, թէ իրոք հայերն այսօրն յետն մնացել, և այսպէս խուարի մէջ են: Կրկնում եմ, հայը ընդունակ է կրթութեան, որովհետեւ նա քրիստոնեայ է, որովհետեւ նա ունի հարուստ լեզու և ճոխ, բազմակողմանի զրոհանութիւն: Նա ունի պատմական անցեալ: Եւ քրեական յանցանք է դա մարդկութեան գէմ՝ արացականչում է Ստանը, թողնել մի աշխարհի ազգութիւն, որ բարոյապէս, մտաւորապէս և ֆիզիքապէս ուշնշանալ վայրենի քրդի և թիւրքի լծի տակ: Հայը կարող է արելքում գիտութեան առաքեալ լինել... բայց նախ պէտք է նրան ազատութիւն տալ: »

Այսպէս մենք տեսնում ենք որ Բաֆֆին « անհնար » է համարում, որ հայ ժողովրդը կարողանայ « զարգանալ, մարդկային առաջնորդութեան ձգտել », վարդանի « երազին »՝ այդ հեռու որ նպատակին հասնել քանի որ նա, հայը, « վայրենի թիւրքի լծի » տակն է: Կործանել այդ լուծը և ունենալ ազատութիւն — ահա թէ Բաֆֆին որն է համարում այն անհրաժեշտ միջոցը, որ նպաստ

տաւոր կայտնվել հայերի առաջադիմական ձգտումների, հետաւոր նպատակի իրագործման համար:

Բայց որո՞նք են այն միջոցները, որ կարենան հարթել ճանապարհ հայերի «դարգանալու, մարդկային առաջադիմութեան ձգտելու» համար. այլ խօսքով՝ որո՞նք են այն միջոցները, որոնցով կարելի լինէր կործանել «վայրենի թիւրքի լուծը» և ունենալ ազատութիւն «Լնչ միջոցներով» — ասում է Ալլանը, — պէտք է տալ մի ճշգրիտ ժողովրդին ազատութիւն երբ որ հազարաւոր զօրեղ ձեռքեր արդէք են լինում,»

Այդ հարցի վերաբերութեամբ այսօր հայերի մէջ տեսնում ենք երկու կարծիք, երկու համոզում, մէկը միւսին հակառակ, մէկը միւսի հակառակ. Դրանցից մէկն այն կարծիքն է, որ օտարը, եւրոպական պետութիւնները 61.7 յօդ. հիման վրայ կտան ազատութիւն հայերին, կիրկեն նրան թիւրքի լծից, ստանց որ և է արտակարգ հանգամանքի, որը հային ստիպէր բացարձակ, արինհեղ պատերազմի դիմել թիւրքի դէմ: Միւս կարծիքը, զրան հակառակ՝ անհրաժեշտ է համարում գէնքի, ապստամբութեան, արիւնի ոյժը թիւրքի դէմ և երեսայտիան դառացանք անուանում օտար տէրութիւնների վրայ դրած յոյսը:

Տեսնենք թէ Բաֆֆին որպէս է վճռում այդ հարցը:

«Բայց երբեք օտարը մարդու համար չէ մտածում, — ասում է Ալլանը, — քանի որ նա ինքն իր մտքին անհոգ է: Ռամկական առանձն ասում է՝ «Լինչն երկխան լաց չէ լինում, մայրը ծիծ չէ տալիս» Բայց մենք այդ էլ փորձեցինք՝ շատ լաց եղանք, շատ աղաղակեցինք, բայց մեր ձայնը լսող չեղաւ... Աշխարհն իր փորի ու քսակի հումար է մտածում... Որպէս Կ. Պօլսի «ստիրայ» սեզանաւորը, իր անձնական շահերի պատճառով, միշտ խնկարկում է մի փրօած և անկարգ կառավարութեան և մեղտ նրա տեղակալութեան համար է աղօթում, — այնպէս էլ կան ամբողջ քրիստոնեայ պետութիւններ, որոնք թիւրքի հետ առետրական յարաբերութիւններ ունեն և իրանց մտեւաւոր շահերի պատճառով թողնում են որ զանազան խեղճ աղջութիւններ թիւրքի բռնակալութեան տակ ձնչվեն: — Նրանք վաճառականներ են, վաճառականի սըր տից միշտ հետու է մարգասիրական զգացմունքը...»

«Օտարի օգնութիւնից մեզ չա՛հ չը կոյ — բացառելով է՛ Ալլանը: Դժբանք է այն ազգը և միշտ դժբաղտ կը մնայ. որ օտարի օգնութեանը կարօտ կը լինի: Ոչ ոք իր հօր հոգու համար մեզ չի օգնիլ. նա պէտք է տաք բան աւնէ մեղինից, որ մի բան տայ: «Ողորմութիւն խընդրողի երեսը սեւ կը լինի և քսակը դատարի:» Մարդ պէտք է իր սեւ պահական աշխատութեամբ և իր ոյժով ոտի կանգնէ: Օտարի օգնութիւնը նման է մի նեցուկի, որը հէնց որ յետ քաշեցիր, կը տեսնես, դարձեալ ցած կընկնի նրա վրա յենված առարկան:»

Յիշեցնելով լեռնային Զօլամէրիկը, որտեղ բնակվում է նեստորական ասորիները Զօլ կոչված ցեղը, Ալլանն ասում է հետեւեալը. — «Զօլն մի քաջագունական ժողովուրդն է, որ սկսեալ անցիլիի ժամանակներից, Զօլամէրիկի լեռներում պահպանել է իր անկախութիւնը: Քրդի և թիւրքի իշխանութիւնը մինչև այսօր այնտեղ մուտք չէ զործել Բայց լինչ է պատճառը: Զօլները թուով այստեղի հայերից շատ փոքր են. նրանց թիւը հազիւ թէ 50 հազարի է հասնում, — կը նշանակէ, վանայ նահանգի հայ ազգաբնակչութեան ութերորդ մասը: — Ուրեմն լինչ է պատճառը, որ նրանք ազատ են:

«Զօլները բոլորը զինուորված մարդիկ են. նրանց կանայքն, աղջիկներն մինչև անգամ գէնք են կրում: Նրանք հասկացել են, թէ առանց սրի մեր դարում չէ կարելի գլուխ պահել...»

«Զօլների օրինակը, — վեջացնում է իր խօսքը՝ Ալլանը, — մի մեծ խրատ է մեզ հայերիս համար, թէ մենք էլ կարող ենք մեր լեռներում ազատ և հանգիստ ապրել և թէ մեր ազատութիւնը կամենայինք պաշտպանել մեր սրով և արիւնով:»

«Աւաղակի հետ պէտք է աւաղակ լինել, — ասում է Պարհատը քեռի Պետրոսին. — աւաղակի հետ չէ կարելի ճգնաւորի պէս վարուել: Երբ որ քուրդն իր սրով և նիզակով դիմում է մեր վրա, երբ որ նա գալիս է մեր տունը քանդելու, մեր կայքը յախտակելու, մեր ընտանիքը անպատվելու, մեզ պէտք չէ խաչով և աւետարանով դուրս գալ նրա առաջը, այլ մեզ պէտք է նոյն պէս սրով պաշտպանել մեր պատիւը:

«Լեթ է կայ մի բան, — ասում է Դուգուկիջեանը, — որ կարող է զրկել հարստահարված և ճնշված ժողովուրդին, դա է — բողոքը, ինչ կերպով և յայտնուելու լինէր նա: Դժգոհութիւնը, տրտմանը և իր վիճակից մի աւելի բարեբար վիճակի ցանկանալը — ահա այն փրկարար շարժառիթները, որ կարող են մեզ ազատել տարկութիւնից: Բայց համբերութեան մէջ խեղդովում են, մահանում են այս տեսակ բարձր ձգտումները...»

«Բաղիանեան թերակղզիի վրայ, — քարոզում է զիւղացիներին Դուգուկիջեանը, — նոյնպէս կան քրիստոնեայ աղգեր, որոնք այստեղի հայերի նման թիւրքայ հպատակներ են, և որոնք այստեղի հայերի նման դարերով տանջվում էին թիւրքերի բարբարոսութիւններից: Բայց նրանք հայերի նման համբերել չը կարողացան, աստամբ վեցան, և ահա մի տարուց աւելի է, որ կուում են թիւրքերի հետ նրանց լծից ազատվելու համար... Բայց պէտք է զիտենաք, որ թիւրքիայի աւելի տանջված, աւելի հարստահարված քրիստոնեայ հպատակը հայն է: Այդ դուք ինքներդ լուս էք խմանում, որովհետեւ ձեր անձի վրայ փորձել էք թիւրքի ամեն տեսակ բարբարոսութիւնները: Ուրեմն ժամանակ է որ հայերն էլ մտածեն իրանց հանգստութեան համար:»

Կարելի էր Բաֆֆիի գրուածներից շատ հատուածներ բերել, որտեղ նա քարոզում է, որ ազատութիւն ձեռք բերելու միակ միջոցն ապստամբութիւնը, յեղափոխութիւնն է, սակայն դա շատ կերկարացնէր մեր յօդուածը: Բաւականանա՞նք նրանով, որ բերենք դարձեալ Ալլանի հետեւեալ խօսքերը.

«Գիւղացիներ, հասաւ ժամը. ձեր արիւնով պիտի գընէք ձեր ազատութիւնը. ներկան, ապագան մեզ է պատկանում, ցոյց տուեցէք, քաջներ, որ թիւրքի երկաթի զաւազանը բոլորովին չէ համրացրել ձեր մէջ կեանքի և ազատութեան զգացմունքը: Արաւիկի և սրի մէջ պիտի գտնենք մեր փրկութիւնը...»

Բայց Բաֆֆին ի՞նչ միջոցներ է ցոյց տալիս յեղափոխութիւն անելու համար:

Դրա պատասխանը մենք գտնում ենք նրա հերոսների գործողութիւններում: Սարհատն, ընդունած աւագակային կերպարանք, անձնուէր ու քաջ երկրասարգներից կազմում է զինւորված խումբ, հալածում է քիւրդներին, զինւորված են հայ շէնի վրայ: Թափառելով Հայաստանի դաշտերով ու լեռներով, նա միտ պատշապան է հանդիսանում ընկճված ժողովրդի, պատու պան է հանդիսանում անձնապաշտպանութեան սուրբ և դրան կից նրանք աշխատում են ժողովրդային ապստամբութիւն բարձրացնել, աշխատում են այդ գործում ունենալ աջակից և օտար ցեղեր, որոնք նմանապէս ճնշված են թիւրք կառավարութեան կողմից և դժգոհ են նրանից. ազիտացիայ են անում ժողովրդի մէջ: Կարօն գործադրում է և տեւօրական միջոցները, ոչնչացնելով հանրային գործին փնտաակար և մատնիչ անձերին: Սալմանը և Վարդանը իրենց ընկերներով մի կողմից գործօն կերպով արօպագանդա են անում ժողովրդի մէջ, նրանք «սերմանում են» Միւս կողմից նրանք ժողովրդի մէջ անձնապաշտպանութեան, ընդդիմադրութեան ազիտացիա են անում ընդդէմ հարստահարողների, զէնքեր են բաժանում, կազմակերպում: Եւ նրանց սերմերը տալիս են իրենց պտուղները. ժողովրդի թարմ ոյծերը նրանց կողմն են կանգնում, նրանց ընկեր դառնում և նրանց հետ ընդդիմադրութեան թշնամուն... Թէպէտ նրանք ամենքը խիստ հարուածներ են ստանում թշնամույց նոյն իսկ հայերի վատութեան, լրբութեան և դաւաճանութեան շնորհով. Թէպէտ «յանկարծ չորս զօրն զձեռք յափշտակեցին Վարդանին», և զցեցին խորունկ բանտը և կամ կախազան բարցրոցորին, բայց «այսպիսի (յեղափոխական) գործը, այո՛, զոհ է պահանջում... փա՛ռք և պատիւ նրան, ով որ կը լինի առաջին զոհը»: Ոգեւորված բոպէին, Վարդանի այդ ի հաւատով ու յուսով բացականչութիւնը ջնջում է յեղափոխական գործի բոլոր դժուարութիւնները. «Իմ հաւատը բնաւ չէ խախտվում անյաջողութիւնից, — ասում է Կուրդուլեանը. — ես և զուգէ իմ բոլոր համախոհներս կրնանք, բայց անկումը ճանապարհ կրացէ մեր հետեւողների առջև. նրանք կանցնեն մեր դիակների վրայով...»

Իւ ինչ մեծ հաւատով զէպի յեղափոխական գործը և նրա աջողութիւնը Բաֆֆին «խենթի», երազում տեսնել է տալիս հետեւալը. «Բայց եթէ զիտենայիր, Վարդան, թէ ո՞րան աշխատեցինք մենք մինչև Հայաստանն այս բարեբաղտ վիճակին կարողացանք հասցնել... լատ աշխատանք... այս երկու հարիւր տարուայ ընթացքում հազա-

րաւոր փորձանքների միջից անցանք... բազմաթիւ արեան և առատ քրտիքի գնով զնեցինք մեր հանգստութիւնը...» խօսում է Սալմանը:

Սյուսպէս, մենք տեսանք, որ հեռաւոր նպատակին, լիակողմանի զարգացման ու առաջադիմութեան հասնելու համար Բաֆֆին անհրաժեշտ է համարում քաղաքական ազատութիւն և ազգային անկախութիւն: Դրան, այդ մօտակայ նպատակին հասնելու միջոցը նրա համոզումն է, որ յեղափոխութիւնն է: Պրօպագանդան, իբրեւ ժողովրդի մէջ հոգ պատրաստող յեղափոխութիւն անելու համար. ազիտացիան, իբրեւ յեղափոխական պատերազմից առաջ ուղղակի զբաղիչ միջոց ժողովրդին ռաի կանգնեցնելու. ժողովրդին զինւորելը, նրա մէջ յեղափոխական շրջաններ կազմելը, և վերջապէս տեւօրը, իբրեւ միջոց ոչնչացնելու այնպիսի փնտաակար անձերին, որոնք առանձնապէս իբրեւ անհատներ յայտնի պարագաներում լուրջ արգելք են հանդիսանում յեղափոխական գործի աջողութեանը. — և այդ չորս միջոցներն էլ իրենց բազմակողմանի կերպերով ու երեւոյթներով, — ահա թէ որոնք են Բաֆֆիի առաջարկած ընդհանուր ժողովրդային ապստամբութիւն ու յեղափոխութիւն անելու միջոցները:

Գ.

Հիմա մենք ունենք դարձեալ երկու հարց. տեսնենք թէ Բաֆֆին ինչ պատասխաններ է գրանց տալիս:

Այդ հարցերն են, առաջին՝ հայութեան ռո տարրերի վրայ է Բաֆֆին մատնանիլ անում իբրեւ փնտաակար հայութեան վերածնութեան գործի համար, և երկրորդ՝ հայութեան ռո տարրերի վրայ է նա մատնացոյց անում իբրեւ վերանորոգիչ հայ ժողովրդի հասարակական կեանքի պայմանների, իբրեւ ջատագով հայ ժողովրդի քաղաքացիական ու մարդկային իրաւունքների ու զոյաթեան:

Նախ կանգ առնենք առաջին հարցի վրայ:

«Խօսելով սրաւոնների «խենթերի» վրայ, որ նրանք համարձակեցան ապստամբել մի բարեբաւ ազգի գէմ, որպէս թիւրքն էր, Թօմաս Էֆէնդին սկսեց սոստիկյար ձակվել հայերի վրա, յայտնելով թէ հայերի մէջ էլ գրաւնվում են այնպիսի «խենթեր», որոնք թիւրքի լուծը ծանըր են համարում և քաղաքական ազատութեան, ինքնավարութեան վրայ են մտածում: Նա յայտնեց, որ առանց թիւրքերի հայերը մի կորած ժողովուրդ են, թէ հայերը իրանք իրանց կառավարել չեն կարող:

«Այդ ժամանակ միայն Վարդանը չը կարողացաւ համբերել: Նա ասաց:

— «Ձեզ նմաններին, որ ծծում էք հայի արիւնը թիւրքի կառավարութեան անկարգութիւնների շիրիւ, — ձեզ նման մուլթէգիմներին, կապալառուներին, ի հարկէ միշտ օգտակար է թիւրքը և նրա անարդար ու անիրաւ իշխանութիւնը: Գուք ջրի պղտորութեան մէջ ձուկ բռնողներ էք. պարզութիւնը ատելի է ձեզ: Գուք խաւար էք սիրում, որովհետեւ գողերը ասում են լոյսը...»

Վնէ՛ծք, միայն անէ՛ծքի են արժանի ձեզպիսինները
Գութ էք հայի տունը քանդողները, սկսեալ գիւղական
չնչին մուլթէզիմից, որի ներկայացուցիչն ես դու մինչեւ
Բարձր Գրան այն խոշոր ամիրանները, որոնք իրանց շահե-
րի համար իրանց ազգի շահերը վաճառում են . . . »

« Բայց զոգը այնքան միասակար չէ, ասում է Ասլանը,
երբ մէկի ուխտարը, միւսի աւտոսակը գողանում է . իմա-
սածները (հայ դրամատէրները, հայ պաշտօնեաները, հայ
վաճառականները) այնպիսի գողեր են որ նրանց միա-
սը հասնում է մեր ամբողջ ժողովրդին։ Նրանք խիստ
յարմար գործիչներ են մեր բռնակալների ձեռքում։ Նը-
րանք ճշում, ոչնչացնում են ամեն զօրութիւն որ գործ էր
գրվում թշուառ ստրուկին հանգստութիւն պարգեւելու
համար։ Եւ այդ գողերը, այդ աւաղակները, որպէս ասե-
ցի, մեր հասարակութեան առաջնորդող անձինքն են . . .

Հայ ամիրայ սեղանաւորը, շարունակեց Ասլանը, բարձը-
րադոյն դռան տնտեսը, զօրքի և հարկերի կապաւառուն,
նոյնպիսի աւաղակներ են, որպէս քուրդ իշխանի չա հ-
րան դան — որպէս քեռի Պետրոսը։ Բայց նոյն ամի-
րաներն են մեր ազգապետն երբ. նրանք են դար-
ձնում մեր ազգի կառավարութեան սանձը դէպի ամեն
կողմ որ կողմը որ իրանց հաճելի է . . . Այժմ ինչ յոյս
կարող ենք ունենալ նրանցից — մեր արիւնը ծծողնե-
րից, մեր աշխատութեան վատակը մեր ձեռքից խողունե-
րից . . . Նրանց համար միշտ ձեռնառու է մի անկարգ և
բռնակալ կառավարութիւն, որի պղծութեան մէջ կա-
րողանում են որսող իրանց շահերը։ Հայի արտասուքը և
թափված արիւնը նրանց չէ ազդում. նրանք իրանց քը-
սակը հարստացնելու համար են միայն մտածում . . .

— « Եւ այսպէս մեր ժողովրդի դրամատէրները, այս-
ինքն այն անձինքը, որոնց ձեռքում կայնութեան կարո-
ղութիւն, փոխանակ օգնելու որ միակը եւ գիւղացին հայ
և հանգստութիւն ունենան, աւելի իրանք են մտածում նը-
րանց կենսական զօրութիւնը, աւելի իրանք են ամբողջը
նում նրանց ստրկութեան շղթաները։ Թէև նրանց զոր-
ծողութիւնները կատարվում են անուղղակի կերպով, բայց
մի և նոյն է՝ լինել աւաղակ, կամ աւաղակի ձեռքում
գործիք։ Բայց ազգը, միամիտ և տգէտ ազգը պարծե-
նում է իր ամիրան և քիփաբով, խոնարհվում է նը-
րանց պոչի և խորին յարգութեամբ մատուցանում է
նրանց իր խոնարհ երկրպագութիւնը . . . »

« Եթէ մեր ժողովրդի առաջնորդող մասը, ասում է Աս-
լանը, նրան այն շաղի մէջ դրած լինէր, նրան այնպիսի
ուղղութիւն տուած լինէր, որ նա վերջապէս հասկանար,
թէ որքան վատ է օտարի կոպիտ ուժի տակ ճշուած
զրութիւնը, թէ որքան լաւ է իր սեփական հողի վրա,
իջ քրտինքով ազատ ապրելը . . . մեր գործը շատ
հեշտ առաջ կերթար . . . Բայց միքեր են մեր ժողովրդի
առաջնորդող անձինքը։ Մենք աղետալից տական դաս
չունենք, մենք ունենք վաճառականներ և եկեղեցական-
ներ։ Վաճառականները, այլ խօսքով, դրամատէրները,
յութ գիտէք ինչ տեսակ հրէշներ են . մնում են եկեղե-

ցականները, որոնց ձեռքումն է ժողովրդի կրթութիւնը
և նրա բարոյական ու մտաւոր դաստիարակութիւնը։
Եկեղեցականը, որ ազգի մէջ և լինէր նա, միշտ ընդդէմ
է մարդկային անհատական ազատութեան։ Եկեղեցակա-
նը միշտ ընդդէմ է աշխարհային բարեկեցութեան . նա
չէ կարող համբերել, որ մարդը ճանաչէր իր հայրենիքը,
այսինքն երկրի այս կամ այն կտորի վրա հիմնէր իր
կեանքի և ապրուստի գոյութիւնը։ Եկեղեցականը հեր-
քում է ներկայ աշխարհը. նրա հայրենիքը երկինքն է։

« Ուրեմն, շարունակում է Ասլանը, մի ժողովուրդ որ
յանձնված էր եկեղեցականի կրթութեանը, կարող է մը-
տածել այս բաները . — Թէ ինքը մի ազգի որդի է, ու-
նի իր աւանդութիւնները, իր պատմութիւնը և իր ա-
ւանդութիւնները, որոնք իր համար նոյնքան սուրբ են,
որքան սուրբ է ազգային ինքնուրոյնութիւնը։ Թէ իր
նախնիքը թողել են իրան մի կտոր հող . դա իր նուիրա-
կան ժառանգութիւնն է . այն հողը պէտք է մշակել և
նրանով քաղցր ու հանգիստ վարել իր կեանքը։

« Դոյլ ցնորամիտ «երկնաքաղաքացիներ», ազգեցու-
թեանն ենք պարտական, բացականչում է Ասլանը, որ
մեր ժողովուրդը այսօր գտնվում է իր խորին բթամը-
տութեան մէջ . . . Այժմ չէ կարելի գտնել մի մարդ որ
այնպէս վայրենի, անզգայ և անտարբեր լինէր դէպի
հասարակաց բարին ինչպէս մեր կուսակիցն եկեղեցակա-
նը . . . Այժմ եկեղեցականը մեզ համար մի մեռած և
անպիտանացած տարր է . . . »

Այսպէս՝ իբրեւ միասակար, փթած ու անբարոյական
տարր հայութեան վերածնութեան համար Բաֆֆին հա-
մարում է հայ դրամատէրներին, վաճառականներին,
հայ կառավարչական պաշտօնեաներին « սկսեալ գիւղա-
կան չնչին մուլթէզիմից մինչև Բ. Գրան այն խոշոր ա-
միրանները » և վեաջապէս հայ եկեղեցականներին։ Գը-
րանք բոլորը ժողովրդի մօլի հարստահարիչներն են, նը-
րա ստրկութեան պաշտպանն ու յենարանն են։ Գրանք
ձեռք ձեռքի տուած թիւրք կառավարութեան հետ, զոր-
ծակից են այս վերջինի բռնապետական գործողութիւն-
ներում, քաջալեր և մի և նոյն ժամանակ գործիք են նը-
րա ձեռքին ի վնաս հայ ժողովրդի . դրանք հայ ժողո-
վրդի մոլեգին թշնամիներն են։

Վահայն հայութեան մէջ որոնք են ժողովրդի բարե-
կամները, նրա պաշտպանը, նրա վիճակի բարեկաւո-
թեան վրայ մտածողը։ Որոնք են կաղմում այն ոյժը,
որը կարող լինի պատրաստել և առաջացնել յեղափո-
խութիւնը, ժողովրդի փրկութեան այդ միակ միջոցը։

Երիտասարդութիւնը հայութեան մէջ այդ օգտակար
տարրերից մէկն է, պատասխանում է Բաֆֆին։ Բայց
ոչ այն երիտասարդութիւնը, որին երիտասարդու-
թիւնն անունը տալ չենք կարող։ Ոչ այն երիտասար-
դութիւնը, որ, ինչպէս ասում է Բաֆֆին, « մենք ու-
նենք Վ. Պօլսում մի քանի տգէտ և ամեն կրթութիւ-
նից զուրկ զէվզէկներ որոնք ուրիշ ոչինչ չեն, եթէ
ոչ չաղակրատ տիրացունել »։ Ոչ այն երիտասարդու-
թիւնը, որը ոչ միայն չ'ատ հետու է բարձր ձգտումն.

րից, անձնությունների զգացումից, գաղափարականից, ի դեպից, այլ և ուղղակի կամ անուղղակի կերպով հակառակորդ, հալածող, թշնամի է վերոյիշած յատկություններին: Ոչ այն երիտասարդությունը, որ զիտակցաբար կամ անզիտակցաբար շուրջում է իր երիտասարդ ոյժերը բամբասանքի, նախանձի, անձնական հոնգոտի, անգործության, թմրության նախաստիճիկի ու դատապարտելի կրքերում: Ոչ այդ վաղահաս ծերունիները, այդ ոչ միայն անպետք, այլ և հասարակության համար վնասակար, հոգևոր ապականված վաշխառու, խելքով կամ բորբոսնած եսամոլ զգացումներից և կամ մեծ գնդապետի գլխի չափ՝ երիտասարդությունը, — ոչ, դրա վրայ չէ Բաֆֆին դրել իր յոյսը, դա չէ՝ նրա խօսած երիտասարդությունը և երիտասարդ ոյժը: Նրա կոչած երիտասարդությունը՝ Ասլանները, Արծնները, Վարդանները, Սալմաններն են, առաւել կամ պակաս գործութեամբ օժտված հարուստ ու անարատ հոգևոր, օժտված լիջութեամբ, անձնազոհության զգացումով, անկեղծ սիրով նուիրված հարազատ ժողովրդին և նրա գործին: Բաֆֆին խօսածն այդ երիտասարդությունն է, որ վըսեմ, սուբլիմ գործում կհանդիսանայ ժողովրդի քաջակերը, առաջնորդը և ընկերը:

Բայց երիտասարդության կից կայ և մէկ ուրիշ ոյժ, մէկ ուրիշ ասար, ժողովրդի վիճակի բարելաւութեան գործում նմանապէս օգտուէտ ու գործունայ, թէպէտ անմշակ: Այդ երկրորդ ոյժն ինքը ժողովուրդն է, ամբողջն է, որ երիտասարդութեան հետ միասին ընդունակ է յեղափոխական գործի ձեռնարկութիւնն աջողութեամբ պըսակել:

«Թէ ինչ հետեանք կունենայ մեր ձեռնարկութիւնը, առում է Ասլանը, մենք այժմից նախագուշակել չենք կարող, միայն վստահ ենք նրա աջողութեան մէջ, որովհետեւ մենք հետեում ենք բնութեան ընդհանուր օրէնքներին: Թէ բնութեան մէջ և թէ մարդկային կեանքում ոչինչ բան առանց պատճառի չէ կատարվում: Մենք տեսնում ենք ամեն մի ճշդում և սահմանափակված գործելուն որքան աւելի սեղմվում է, այնքան աւելի զարգանում է նրա մէջ ընդդիմահարութեան ուժը: Այնուհետեւ նա պիտի պայթի, նա պիտի խորտակէ իրան սահմանափակող պատուարը և իր բնական ազատ ծաւալականութեանը պիտի հետեւէ: Ժողովուրդը, ամբողջը նոյն պէս մի գործութիւնն է: Նա երկար չէ կարող համբերել իրան ճշմարտությանը և ստրկացնող կոպիտ ձեռքի: Նա վերջապէս պիտի խլիւղի, պիտի խորտակէ իր շղթաները և պիտի թօթափէ բոլոր նախալի լուծը: Բայց հասել է... այս գործութեան մէջն է այժմ մեր ժողովուրդը:»

Խօսելով նրա մասին, որ հայ երիտասարդութիւնը փչացած, ապականուած է և չէ կարող իրացնել բարձր ձգտումները, Ասլանը բացականչում է. — «Այսուամենայնիւ, մենք բոլորովին յուսահատ չենք, մենք ու-

նենք մի, թէ և անմշակ, բայց մեծ գործութիւն — ամբողջը — դա բաւական է...»

Այսպէս, ժողովրդի ու հայրենիքի ազատութեան մեծ գործում օգտուէտ, գործող այդ երկու տարրերն են, թարմ ու նորահաս երիտասարդութիւնն և ժողովուրդն, ամբողջը: Այդ երկու մեծ զօրութիւններն են միայն կարող միավորվելով «խորտակել ստրկական շղթաները և թօթափել բռնակալի լուծը»: Հայութեան միւս տարրի կից «ոչ մի բարիք ժողովրդին սպասել չէ կարելի»:

Բայց այդ անմշակ տարրը, ամբողջը, պէտք ունի առաջնորդի, որը «նրան այն շաւղի մէջ դնէր, նրան ուղղութիւն տար, որ ամբողջ վերջապէտ հասկանար, թէ ո՞րքան վատ է օտարի կոպիտ ոյժի տակ ճնշված գրութիւնը, թէ որքան լաւ է սեպհական հողի վրա իր բրտինքով ազատ ապրելը»:

Բաֆֆին այդ առաջնորդին կոչում է գէպի գործ. կոչում է հայ ժողովրդի կեանքը հիմնել հասարակական հաստատուն պայմանների վրայ, որոնք տանէին նրան դէպի հանրական բարօրութիւն: Այդ առաջնորդը Բաֆֆին ըզձած ու նկարագրած թարմ ու նորահաս երիտասարդութիւնն է, որի ուսուցիչն էր ինքը և որին նա օրինակ յայտնվեցաւ իրրեւ հայրենիքի ու ժողովրդի ազատութեան ջատագով և յեղափոխութեան նշանաւոր պրօպագանդիստ, պրօպագանդիստ վիպասան, որի միակ իղձը, միակ և բազմ հետեւաւն էր.

«Արդեօք դալու է մի օր ժամանակ

Տեսնել Կասիսի զլսին մի դրօշակ

Եւ ամեն կողմից պանդուխտ հայազգիք

Գլմել դէպ իրանց սիրուն հայրենիք»:

«Բայց հասել է... հայ ժողովուրդը երկար չէ կարող համբերել իրան ճշդ և ստրկացնող ձեռքին: Նա վերջապէս պիտի խլիւղի, պիտի խորտակէ իր շղթաները և պիտի թօթափէ բռնակալի լուծը»: Նշանաւոր ուսուցչի այդ բացարձակ գոչիւնը, զիտութեան և ժողովուրդների պատմութեան վրայ հիմնված այդ մարդագրութիւնն արդեօք ե՞րբ պիտի իրականանայ: Արդեօք ե՞րբ մեր թարմ ու նորահաս երիտասարդութիւնը վեր կթռչէ, բարձր ուղով կազդուրված և, որպէս երիտասարդ առժիւժի զօրութեամբ ու էներգիայով բաց կանէ իր հոգեկան ու մտաւոր թևերը հայրենիքի դաշտերի, լեռների, ջրերի, շէնքերի, ժողովրդի վրայ, իրրեւ նրան պաշտպան ու ջատագով: Արդեօք ե՞րբ նա կիրադործէ իր ուսուցչի յոյսը, հայ հասարակութեան լաւագոյն մասի յոյսը, հայ ամբոխի, հայ ժողովրդային ընդհանրութեան յոյսը... Մենք ունեցել ենք և ունենք ազատութեան ու յեղափոխութեան զբաւոր պրօպագանդայի ժամանակը, այդ անհրաժեշտ պայմանը՝ մեծ, կենդանի գործից առաջ ժողով: Նոյն ինքը Բաֆֆին հայութեան ժամանակիւ անհրաժեշտ արտազօրութիւնն էր. նոյն ինքն անհրաժեշտ էր գործից առաջ, զինուորված տաղանտաւոր բարբառով ու մեծ

խօսքով, որով զարկ տուեց ու առաջ տար: ու ժամանակը, մտնեցրաւ գործի օրւան: Բայց երբ կիրազործվէ այդ խօսքը, երբ կղայ այն ժամանակը, երբ կենդանի գործն ունենայ իր կենդանի գինւորներին, երբ Աստուծոյը, Կարօնըը, Աստուծոյը, Վարդաններն իսկապէս գոյութիւն ունենան մեր մէջ, մեծ գործ ու մեծ ձեռք ձեռքի տըւած ամբօխի զաւակներին՝ Հայրապետներին, Վոյներին:

Հայ հասարակութեան մէջ պէտք է յայտնվին այդպիսի անձեր և հաւանական է իրենց շատ սպասեցնել չը տան: Մեր ընդհանուր կեանքի բոլոր կերպերն այնչափ փթած են, մեր քաղաքական, տնտեսական, սոցիալական կայութեան կերպերն այնքան վնասակար ու խռնդոտ են յայտնվում մեր բազմակողմանի դարդացման ու առաջադիմութեան համար, այնպիսի կործանիչ ու քայքայող ազդեցութիւն ունեն մեր ամբողջ էութեան վերայ, որ դրանց դէմ բողոքողներ կառաջանան և պէտք է առաջանան յեղափոխական գործունէութեամբ: Հայութեան ներկայ հասարակական պայմաններն կառաջացնեն այդպիսի անձեր, որոնք և լիովին կհանդիսանան արտայայտիչ Հայ հասարակութեան ամենալաւ մասի, հասարակական բարձր ու բնական ձգտումներին: Այդպիսիներն յայտնվելով լոկ հայրենասիրական խօսքի չրջանը կանցընեն, էլ առանձին ու մենակ չի մնալ և կմիտորվէ կենդանի գործի հետ: այդ ժամանակը կսկսվէ բուն գործի չըրջանը, ունենալով իրեն հետեւող նշանաւորներ: «Հպարտացիր, հպարտացիր, ո՛վ մարդ, քո վրեժ կ'ուժով: Կեանքը գործել է նշանակում, իսկ գործելը պատերազմ է: յապութիւն հասկանութիւնը, զոհիւր ամեն բան բարեկամի, հայրենիքի, մարդկութեան բարօրութեան համար: Առանց պատերազմի չկայ ծառայութիւն, առանց ծառայութեան չկայ վարձատրութիւն, իսկ չգործելը կեանք չէ»:

Ամեն բան, ամեն երևոյթ, ամեն իրարանցում հայոց կեանքում զգացնել է տալիս նոր օրուայ առաւօտեան օդի թարմութիւնը, նոր օրուայ արշալոյսի մօտ լինելը և Հայ ժողովրդի բարօրութեան վրայ անկեղծ մոտժողի սիրտը զողով բաբախում է և գործի ծարաւ է զգում: այն մեծ օրուայ գալուստը զգալով: Մինչև ամբողջ մեծ խօսքի օրն էր: իսկ երբ կգայ գործի օրը՝ Նա հետո չէ... «բազէն հաւանք է»...

ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍՔ

Նա ուղում եմ տեսել մի քանի խօսք Հայ երիտասարդութեան մասին: Քուցէ և հեզնական ժպիտ ծագէ հայ երիտասարդութիւնն բառերը կարդալիս: Արդարեւ, ուր է մեր մէջ երիտասարդութիւն, որ և է հասարակութեան այդ գերագանց ծագիլը: Երբ որ դիտում ես կեանքն այդ տարիքով երիտասարդ, բայց հոգեով զառամած Հայ երիտասարդութեան, դու նրա մէջ ոչինչ չես գտնում, որ ապագայ լինէր երիտասարդական պիտի և հրապոյրի գոյութեան: Մէկ ինչ որ համար խլու-

թիւն տիրած է նրա սիրտը և ինչ որ մշտական հոգս պաշարած է նրա էութիւնը: Այդ համար խլութիւնը՝ նրա կեանքի անգունութիւնն է: այդ մշտական հոգսը՝ նրա կենսական առօրեայ հոգան է: Եւ դրանք են միայն նրա կեանքի ամբողջ իմաստը: Մեր երիտասարդութիւնը, անընդունակ է հրաժարվելու ամենայն տեսակ նախապաշարութեանից, նման է ոչխարների մի հօտի, որի մեծ մասը բաւականանում է խոտ արած եւ լուսնի — սեպհական հանգստի, չահերի, գուարճութեան ետեւից ընկնելով: իսկ նրա փոքրաթիւ մասին մի կողմից խոտ արած եւ լուսնի չէ զոհացնում, միւս կողմից նա մի և նոյն ժամանակ վարանվում է դիմել այնպիսի էական գործի, որի համար նա արդէն պարտաւորված է խոտ արած եւ լուսնի՝ բոլոր անձնական իսպառ մոռանալ: իսկ կեանքը, ժամանակիս պահանջները, հասարակական իրար յաջորդող հարստիչ հանգամանքները այդ փոքրաթիւներին բնական կերպով մղում են գէպ ուրիշ ասպարէզ, գէպ ուրիշ գործ: Եւ ահա հէնց այդ ժամանակ նկատելի է այդ փոքրաթիւների բարոյական տկարութիւնը, որը նրանց թոյլ չէ տալիս բարձրվին հրաժարվել խոտ արած եւ լուսնի, հրաժարվել յանուն մէկ ինչ որ բարձրի, անձնականից դուրս գործի, գործ, որը մի և նոյն ժամանակ աչքից բաց թողնել նրանք նոյնպէս չեն կարողանում: Ինչ անել ինչի՞ դիմել... տանջող հարց, որ տառանումն ու տարակուսանքը չեն թողնում վճռել: Ծանր հոգեկան դրութիւն, ներքին չարչարող պատերազմ, որ ճակատադրին տալիս է մի որոշում...

Մի կողմ թողնում մեր երիտասարդութեան այն մեծամասնութիւնը, որի կեանքի նպատակը, միտքն ու նշանակութիւնը խոտ արած եւ լուսնի է միմիայն: Նա մեզ չէ հետաքրքրում: Միայն պէտք է նկատել այն կէտը, որ ժամանակի ընթացքի հետ նա պիտի իր գոյնը փոխէ և կամայ ակամայ յարմարվէ ժամանակի հասարակական ձկտումներին: Մինչև անգամ՝ այժմ մեր այդ խոտ արած տիպերի մէջ նշմարելի է յայտնի փոփոխութիւն: Ներքին, հարկաւ ըստ երևոյթի և անձնական նկատումների, չեն գլանալ և մէկ երկու տար, «զօրբա» խօսք տեսել Հայ բազմաշարար ժողովրդի ներկայի և ապագայի մասին: Նրանք շատ անգամ իրենց այնպիսի հանգամանքի մէջ են տեսնում, որ ստիպված են լինում ժողովրդի մասին երգել այդպիսի երգեր. «մօղա» է, կասեն մեր ֆէլլիտներս:

Բայց ինչո՞ւ վրդովել նրանց արիւնն այնպիսի անհամեստ դիտողութիւններով: Չէ՞ որ նրանց այդպիսով և ոչ էլ ուրիշ միջոցով անկարելի է ուզել: Չէ՞ որ կողը կմնայ միշտ կազ և կոյրը՝ միշտ կոյր: Արեւմտեւ, զուր չարչարանք իմ կողմից: Եւ վերջապէս ինչի՞ են նրանք պէտք ժողովրդական գործի վերաբերմամբ: Նրանցից ոչինչ չուտ չի լինի ժողովրդին. մաղթենք, որ գոնէ վնաս էլ չլինի:

Բայց Հայ երիտասարդութեան փոքրաթիւների ճակատագիրը բաւական լուրջ նշանակութիւն ունի մեր հասարակական կեանքի թէ՛ ներկայ և թէ՛ ապագայ:

Հանդամանքների, սպայմանների վերաբերմամբ: Եւ այդ տեսակէտից նրանք իրենց ճակատագրով ներկայացնում են իրական հետաքրքրութիւն մեզ համար:

Մի քանի տարիներէից ի վեր նկատելի է այդ տիպերի ծաղումը մեր մէջ: Անձեր, որ ժամանակ առ ժամանակ մոռանալով եսական նեղ շրջահայեցողութիւնը, աւելի լայն կերպով են աչք գցում իրենց շուրջը և ակամայ հանդիպում հայ ժողովրդին և նրա աննախանձելի վիճակը: Անբաւական ժողովրդի այդպիսի դասն կայտնութեամբ, նրանք սկսում են մատնել նրա մասին, նրա բարեւատնական մասին: Եւ չեմ կասկածում, որ այդ մոռածումներն ու զգացումներն անկեղծ չլինեն: Բայց մի հարց նրանց միտ հարածում է: — Խնչպէս օգնել այդ ժողովրդին: Ահա հէնց այդտեղ մտքերի կապը կտրվում է, թելը խճճվում: Չարմանալի հարց, որին տրվում են դանդաղ ան պատասխաններ, — և ինչ հակառական պատասխաններ: Մէկը յոյս ունի կառավարութիւնից, որ սա կիրառութիւնն այլ և այլ բարենորոգումներ ժողովրդի կեանքում, ուրեմն պիտի օգնել նրան: Միւսը խաղաղ կուլտուրական առաջադիմութեան մասին է քաղաքում: Երրորդը կարծում է, որ եւրոպական տէրութիւնների միջամտութեամբ կարելի է ձեռք բերել ինքնավարութիւն Հայաստանում, հետեւապէս հայերին պէտք է ջանալ զբաղուելու ինքնավարութիւնը զրաւել զէպի հայ ժողովուրդը: Չորրորդն այն համոզման տէրն է, որ աւելի արմատական, բռնի յեղաշրջութեան և կառավարութեան դէմ մղված պատերազմի միջոցով կարելի է զննել ժողովրդին բարեւաւորեան շուղի վրայ:

Առաջին կարծիքը փարատվում է, երբ նայում ես կառավարութեան օրից օր աւելի և աւելի առաջադիմող ճեղքումները, բռնութիւնները: Երկրորդն անհնարին է, քանի որ դրա համար անհրաժեշտ է մի լայն պայման, — քաղաքական ազատութիւն: Երրորդ կարծիքը հիմնված է օտար սկստութիւնների շահերի վրայ, որոնք նոյնչափ փոփոխական են, որչափ և ենթակայ ամենօրեայ դանդաղ անցուցու ու անապասելի հանգամանքների: Չորրորդը... Թողնեմ մի վայրկեան այդ կէտը, որովհետեւ մտքերն առաջիններից տարբեր կերպարանք են տառնում:

Առաջին երեք կարծիքները փորձերի հիման վրայ ապացուցանում են, որ նրանք օգտին են, անհիմն են և դուրի են կանոնաւոր հետեւողութիւն ունեցող տրամաբանութիւնից, և ըստ մեծի մասին կազմված են օտարների վրայ դրած ինչ որ յոյսերից, որոնք քննադատութեան են թարկվելով: շքանում են: Բայց կայ և չորրորդ կարծիքը: Նրա նպատակայարմարութիւնը հայերի մէջ դեռ փորձելով չէ ապացուցված, բայց այլ ժողովուրդների պատմութիւնները հաստատում են, որ այդ միջոցով զիմեղով նալատակին ուշ կամ վաղ յաղթութիւնը կլինի: Այնուհետեւ այդ կարծիքը չէ յենվում յոյսերի, կամ հայ հասարակական ներկայ կազմակերպութեան մէջ անիրազործելի դիտարկութիւնների վրայ: Եւ չէ ստասում իրրեւ երկնային մանանայի օտարի օգնութիւնը: Չորրորդ կարծիքը յոյս է նշում հայ ժողովրդի ոյժի վրա, հայ ազգային ոյժի վրա:

և միմայն դրանց վրայ:

Հայ երիտասարդութեան փոքրաթիւնէրը շնչատափաբբրում են այդ բոլոր հարցերն ու պատասխանները: Տառնումն ու անվճռականութիւնը տիրում է նրանց: Չորրորդ կարծիքը սարսափեցնում նրանց: Մի կողմից՝ բարեկամներ, ազգականներ, քոյր, եղբայր, հայր, մայր, իր անձը. միւս կողմից՝ ժողովուրդը, նրա թշուառութիւնները, նրա ապագան: Մի կողմից՝ անձնական հանդիստ, զուգէլիութիւն, երջանկութիւն, խաղաղ գործունէութիւն: միւս կողմից՝ դրկանք, բանտ, աքսոր, արիւն... մահ... Չոհել առաջինները և զիմեղ միաներին, և կամ ընդհակառակը. — այդ հարցը միմայն այդպէս է կարելի վճռել:

Խնդիրը պարզ է: Առաջինները ոչ մի գոհ չեն պահանջում, երկրորդն՝ ընդհակառակը. և երկրորդին դիմելու համար հարկաւոր է բարոյական ոյժ և հաւատարմի համոզում: Սակայն պատահում են երիտասարդներ, որոնք լինելով բարոյական ոյժից, համոզումից զուրկ, առում են, որ իրենք կամ բաւականաչափ «պատրաստ» չեն, կամ «անընդունակ» են և այն... դ ու թ ի համար: Ենթադրենք, որ այդպէս խօսողների մի չնչին մասն անկեղծաբար է յայտնում իր կարծիքը: Բայց միամիտները չեն հասկանում, որ նրանք այդպիսով կաշկանդում են իրենց ոյժերը և խաբում են թէ արիւններին և թէ իրենց:

Հրաժարվել բոլոր անձնական կեանքի դիտաւորութիւններից, նպատակներից. հրաժարվել բարեկամական, ծնողական և այլ անձնական սիրելի կապերից, և այդ բոլոր յանուն միլիոնաւոր ազգակիցների, միլիոնաւոր ծնողների հանգստի, յանուն ժողովրդի բարօրութեան, — բռնութեան դէմ ազատութեան համար մաքառողի, յեղափոխականի դործունէութեան առաջին պայմաններից մէկն է դա:

Պատիկ սրտերը զայրացկաւ ժպտողով ու տ օ պ ի ո տ (utopiste), ցնորամիտ և «խենթ» կանուանեն ինձ իմ խօսքերիս համար: Թող. ևս ամենին նրանց չեմ գիմում: Բայց կըտնվեն և այնպիսի սրտեր, դեռ չփարակված հսականութեամբ, սրտը մեծ դ ու թ ի գոտան չէ մ'ը ի ն կանգնած տառանմում են անվճռականութեան մէջ. — նրանք ինձ կը հասկանան և խօսքերս նրանց են ուղղված:

Մարդկութեան պատմութեան մէջ եղել են այնպիսի պատերազմներ, որոնք նպատակ են ունեցել հանրական բարօրութեան համար: Նրանք անպտղաբեր չէին: Նրանք շատ զոհեր կ'անեցին և պէտք է կ'անէին:

Միայն մանրը, պատիկը, թեթեւ ու զիւրամտալի գործերը գոհ չեն պահանջում: Մեծ գործերը, որոնք տանում են մարդկութեանը դէպ առաջադիմութիւն ու բարօրութիւն, առանց ծանր զոհերի չեն կեղել և չեն էլ լինել:

Միայն տկար, անընդունակ, թմրած, սահմանափակ ոյժերը կարող են յաղենալ փոքրիկ ու թեթեւ գործերով իրենց հանդիստն ու շահը միտ ունենալով աչքի առջին: Մեծ ոյժը մեծ գործ է պահանջում:

Մանրակրկիտը, ետսերը, անզգան, պոռոտախօսը կարողութիւն ունի տեսնել մարդկային թշուառութիւնները և դարձեալ ուսանասրտութեամբ շարունակել ապրել իր անձնականի նեղ շրջանակում: Բարձր, անկեղծ, ազնիւ հոգիներ:

ը մարդկութեան բարօրութեան համար ընդունակ են զոհ
վելու, և նրանք զոհվել են, կրօնվեն, և պէտք է զոհվեն...
Թիֆլիս. Դ. Հ.

ՀԱՅՈՑ ԿԵԱՆՔԸ

Սկսած ինքնուրույն կերպով զարգանալու հրաժա-
րական ընդունակը սուլթանի կողմից: Բայց այդ ուրա-
խութիւնը վաղանցուկ կարող է լինել: Մտաւ ապագան
պատրիարքական նոր ընտրութեան վերաբերութեամբ
մութ է: Պայտական տխրահաշտակ ազգային ժողովներն ի-
րենցից ներկայացնում են խնդիրներ և խնդիրներ
մանրակրկիտ անձնական շահերի և մտքերի խառնափն-
դութեան ու «զէվզէկութեան» բոլոր: Եւ արդեօք գրան-
ցից սպասել մէկ օրինակի պատրիարքի ընտրութիւն...
Կռակներ նրանցից սպասել այդ, յուսալ նրանց «հանձա-
րից և փորձառութիւնից» օգտուէտ արդիւնք, բայց հա-
կառակ մեր ցանկութեան անկարող ենք այդ յայտն ունենալ
նրանց վերաբերութեամբ: Այն իրենց գործերով, ոչ իրենց
խելքով, ոչ իրենց «ազգային» գործունէութեան նախադե-
րով և ոչ իրենց հոշակաւոր ու գովոված «ազգային սահ-
մանադրութեամբ», որի զեղեցիկ ու հմուտ քննադատու-
թիւնը նախկին բէլգիական միւսիստ Բոլէն - Դէկմէնայ
թարգմանած զեռնակիցներ «Հնչակի» Յ. Բ. համարում, —
պէտք է պայտական հայ «գործիչները», չեն վատաւել մեր
յոյսը, մեր հաւատը զէլ իրենց օգտուէտութիւնը հայ
ժողովրդի վերաբերութեամբ: Թիւրքահայ կարի և բիւստ
ն երի համար ազգային ժողովները ներկայացնում են
պոտոր ջուր ձուկ որսալու համար... Հայ ժողովրդի վի-
ճակը դրանց շնորհով աւելի կ'փառթարանայ, և մնում է
միայն թրեւել գրանց վրայ և գործը սկսել ն երբ և ից
ժողովրդից, որ կարելի լինի փրկել նրան աննիդհատ թըշ-
ուառութիւններից:

Ա propos... Ինչպէս ամեն տարի պայտահայերն այս
տարի էլ տանկին սահմանադրութեան տարեդարձը: Օ,
ճամբարտ որ դա մի տան էր պայտահայի համար. կենաց-
ներ... կենացներ թէ՛ Յարութիւնի և թէ՛ սուլթանի ճա-
սեր... ամենայն տեսակ ճանքեր, թէպէտե մեզ կողմնակի
կերպով գրել են Կ. Պայտից, որ այս տարուայ տարեդար-
ձին ճառերի նկատելի պակասութիւն էր զգացվում, որով-
հետեւ փախ կար... Բեմից... Իրենց սեփական սուր-
էրից արդեօք... Այն կառավարութիւնից... Անհոգ եղէք,
խեղճ Վանդ օ - Պանչաներ... ձեզ պէս բարեմիտները մին-
չե իսկ թիւրք բարբառու կառավարութեան գուրը կա-
րող են շարժել: Չեր այդ արժանաւորութիւնը պէտք է
ճանաչել... դուք զիտուտ էք զէպի թիւրքը և ինչո՞ւ նը-
րան ապերախտ լինել զէպի ձեզ, նրան, այն մեծ թիւր-
քին թիւրքերի պէտքին, որի «անմահ անուան», հայաս-
րութեան և կեանքի երկարատեւութեան, համար դուք
պատրիարքի և ձեր զպրոցական երեխաների շրթներով
սողթում էք, նրան փունջեր ու պտուղներ նուիրում ձեր
դոմեզ մանուկների ձեռներով... Բայց կենացներ:

րից և ճառերից սահմանադրական տարեդարձը հա-
րուստ էր զեղեցիկ ճաշկերպութիւն և այլն նը-
րան պատկանելիք առաջնական թէ՛ երկրորդական
պարագաներով... Վերջապէս պայտահայերը լուք է փ-
արին... Իրենց «գործունէութեան», բուն ապարիդի վրայ
էին... Մինչդեռ նոյն այդ ժամանակ Հայաստանը ներ-
կայացնում էր աւաղակութեան, պանդխտութեան, աղ-
քատութեան, սովի օրորոյ...

Յարութիւնը ասիական բնաւորութեան տէր մարդ է:
Մինչդեռ բիրտ, կոպիտ ոյժի, սպառնալիքի ճնշումը նրա
այս կամ այն քայլին վճռական ուղղութիւն են տալիս,
հասարակական կարծիքի մոռուր, բարոյական ճնշումը
նրա վրայ ոչ մէկ ազդեցութիւն չեն թողնում: Տարիներ
ընթացքում հայ հասարակութիւնը նրա պատրիարքու-
թեան մասին յայտնում էր իր խորին դժգոհութիւնը, ա-
պացուցանում էր, որ նրա պաշտօնանկ լինելը մի մեծ բա-
րիք պէտք է համարվէ հայութեան համար, թէ ուղղակի
և թէ կողմնակի միջոցով պահանջում, որ Յարութիւնը
թողնէ պատրիարքական աթոռը, չարտաւորէ այն կո-
չումը, որ հայ ժողովրդի թէ՛ քաղաքական և թէ՛ կրօնա-
կան կեանքի զեկավարուն է յայտնվում, — բայց այդու-
հանդերձ պնդազրուէ Յարութիւնն իր անձնական գիտում-
ների համար շարունակում էր մնալ պատրիարք, վնաս-
ներ հասցնելով ժողովրդին: Բայց երբ փոքրցում նրան
մօտեցաւ մէկ անձանթ երիտասարդ և յայտնեց, որ նա
թողնէ իսկոյն և եթ իր պաշտօնը, հակառակ դէպքում
նրա կեանքին փորձանք կգայ, մեր Յարութիւնը շատ բն-
դունակ եղաւ այդ սպառնալիքը հասկանալու և սուլթա-
նի համաձայնութիւնը նա կարողացաւ ունենալ իր հրա-
ժարականի վաւերացման վերաբերութեամբ: Այն, դա մի
զեղեցիկ խրատ է հային, ապացուցող թէ որպիսի միջո-
ցով կարող ենք մեր թէ՛ ներքին և թէ՛ արտաքին թշնա-
միներից ազատվել: Բիրտ ոյժը հայի՛ իրրե ասիացու հա-
մար աւելի ազդեցիկ է, քան երկար ու բարակ մոտուր
ու բարոյական նախադրուշացումները:

Մեր տաճիկ կայ այսօր և մէկ ուրիշ հայ, Յարութիւ-
նից աւելի բարձր պաշտօնի տէր, դա ասիացու կատարե-
լատիւ է: Ուժեղի և թէ կոպիտ ոյժի հանդէպ վախկոտ-
երեւողաւ, քսու և ծառայ, իսկ տեղարի առջև ինքն է
բիրտ այ՛ր և ճնշողը: Այդ երկրորդը մեր տխրահաշտակ
կաթողիկոսն է, որ, զոգարւով ոռու կառավարութեան
բարբառու ոյժի հանդէպ, պատրաստ է հայ ժողովրդի
տնտեսական, քաղաքական, սոցիալական ու կրօնական
բոլոր շահերը ոտնակոխ անել ցարի մի հրամանով: Այս-
օր ոտսայ կառավարութեան գիտաւորութիւնն է բոլոր
իր հպատակ ազդերին ոռուացնել և հայերի վերաբերու-
թեամբ նա իր այդ գիտաւորութիւնն ի գործ է դնում
զրեթէ առանց երկչոտութեան: Կա սկսաւ ազգային դպրոց
ներից, այնտեղ մոյցներով իր ոռուացնող մէքենաները և
զեռ աջողութեամբ շարունակում է դոյն գործը և այժմ
նա արդէն դիմում է ուղղակի հայոց կրօնին, հայոց եկեղե-
ցուն, ջանալով հայերին կրօնափոխ՝ յունադաւան գարձնել:
Դրա համար նա միջոցներ է ի գործ դնում ուղղակի ժողո-

վրդի վրայ Գիւղացիներին նա սաստիկ ճնշում է տնտեսականապէս և մենք դրա արդիւնքն այն ենք տեսնում, որ հարիւրաւոր հայ գիւղացիներ շտապում են ընդունել յուսադաւանութիւն, մտցնել ուսաց եկեղեցու կիրքը, յուսալով, որ այդ պարագայում նրանք, իբրեւ յունադաւան, կառաւարութեան խնամքին ու հոգայտութեան տակի կարժանանան: Իրենք գիւղացիներն իրենց այդ քայլն բացատրում են ևս նրանով, որ հայոց կաթողիկոսը գիւղացիների շահերը բոլորովին մոռացած է, հարստահարութիւնների հանդէպ նրանց անպաշտպան ու անոյժ է թողել:

Այսօր ուսաց բարձր պաշտօնականներ կաթողիկոսի հետ շտապում են տեսակցել և անշուշտ իրենց բոլոր գիտաւորութիւնների վերաբերութեամբ Մակարի համաձայնութիւնը վստահելու նրանք այդ համաձայնութիւնը կտաւ նաև և ոչ միայն այդ, այլ և նրանք կվայելն իրենց հայախորոյս գործողութիւններում ու մեքենայութիւններում հայոց վեհափառ Մակար կաթողիկոսի անձնուէր ու շահագիտական աջակցութիւնը:

Այսպիսի խճճված ժամանակ մեզ պէտք է ուրիշ կաթողիկոս, որը կարողութիւն ունենայ ընդդիմադրել ուսաց կառավարութեան, հայ ժողովրդի շահերն ունենալով իր աչքի առջև: Մակարը և Մակարները մեզ պէտք չեն: Եւ միայն բիրտ ոյժը, կոպիտ սպառնալիքը կարող է հայ ժողովրդին ազատել Մակարի նման անախորժ ու չցանկացած հիւրից:

Տեսէք թէ ինչ խայտառակութիւններ են կատարվում Մակարի քթի տակին՝ Երեւանում: Խնորհներ, զուեր, մոռնութիւններ ուսամուլ հայերի կողմից հայերի դէմ: Եւ կառավարութիւնը ամենայնու հայ ոյժերին արտաքտում է Երեւանից դէպի Ռուսաստանի հիւսիսային ու միջին նահանգները: Այսպիսի արտաքսումներ վերջին ժամանակ Երեւանում կատարվել է 15-16-ից աւելի: Ռուսաց կառավարութիւնը սխտեմաբար անհաշուութիւններ, արհեստահող կոիւններ է սերմանում Երեւանի պորսիկների ու հայերի մէջ և միշտ պաշտպանում ու արգարացնում է ստաճիկներին և կատաղաբար հալածում հայերին: Ո՞ր է կաթողիկոսական ձայնն այսպիսի պարագաներում: Ինչո՞ւ օգտվելով բոլորից, նա չէ երեսն հանում այն բոլոր նեղութիւններն ու ճրջումները, որ կրում է հայ ժողովուրդը կառավարութեան չնորհով: Ինչո՞ւ բարի գործով և արժանի օրինակով նա չէ մխիթարում յուսահատված ժողովրդին, որ վերջին աղքատութեան ու շարժարանքին հասած, կորցրել է իր ոտի տակի հողը և անում է անուղղելի սխալներ...

Բոցց այսօր վերելից, կաթողիկոսից, սպասել այդ պիսի գործ ցնորք է. ներքեւից, ամբոխից, պիսի ծագէ իր բարեւաւորեան համար մղվելիք պատերազմը, որ մի և նոյն ժամանակ վրէժ կառնէ իր ապիրատ համադրիկներին: Թող հայ ողջամիտ երիտասարդութիւնը շան գիտանայայս միտքը...

ԱՄՔՈՒԸ

(Ր ա ֆ ֆ ի ի յ ի չ ա տ ա ի ն)

Որպէս օվկէան վաղորդեան ժամին
իր միապաղաղ մակերեւոյթով,
Ժողովրդային ա մ ր ս խ ը լըոին
վարում է իր կեանք սովոր ընթացքով:
Առօրեայ հոգսով ճակատը սքողված,
Լայն կրծքում թագնված հըպարտ զօրութիւն,
Սրտում ամփոփված սիրոյ ջերմութիւն, —
Այլ կեանքի համար նա կեանք է նուիրած:

Իբրեւ հզօր բաւա լուրկանի ծոցում,
Համբերողութեան միտքի տակ ծածկված՝
Գաղտնի կ ա յ ծ եր ը նրա մէջն են վստմում,
Գառն օրուայ համար գրաւական դարձած:
Եւ ինչպէս մէջը խաղաղ օվկէանի
Անյաղթ յորձանքներ չըջվում, կատաղում,
Նրա մէջն էլ թագուն կիրք ու իղձերի
Գոռ յորձանքներն են ուռչում, մեծանում:

Որպէս երկաթէ դըրահի ետն
Անհամբեր տրոփում սիրտը հերոսի,
Նոյնպէս արտաքին լըոութեան ներքեւ
Եռում է կեանքը և ոյժն ամբոխի:
Լոկ երբեմն, — ինչպէս խուլ աղերսական
Հողմը պըտտվում ծովի երեսին, —
Ամբոխի կրծքից տնքոց սոսկական
Երնում և իբր հողմ գառաւորում կրկին:

Բայց ահա սուրբ հողմը զաղտնաբար,
Գունտ գունտ կիտվեցան ամպեր սեպոյն
Եւ ալիքները հըրիւով իրար,
Բարձրաբերձ լեռներ կաղմեցին խկոյն
Եւ փրփրում, ոռնում, չըջում, շառաչում,
Երկինք ու օվկէան ահեղ ցատտումով
Միմեանց հետ կուում... ամեն բան կորզում...
Միայն կանգուն կայ փարոսն իր լուսով:

Այդպէս և ամբոխն է տարր խրոխտային
Երբեմն նրա կրծքից ծայթբում է լուսն,
Նրա միջի յորձանք մանչում են ուժգին
Եւ նրա հեզ, դժգոհ շնչի զօրութեան
Հանդէպ կործանվում բանտ ու պալատներ,
Նըրա՝ կերակրած կեանքեր խորտակվում...
Եւ լոկ փարոս իբր մէկ աւետաբեր,
Նրա դրոշակն այնտեղ մենակ ծածանվում:

Լ: